ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

ՀՏԴ 378 (072)
ԳՄԴ 74.58
Մ 452

Հրատարակվել է ԵՊՀ հայ բանասիրության
ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ

Կազմողներ՝ բ. գ. թ., ասիստ. Լ. Ավետիսյան
բ. գ. թ., ասիստ. Լ. Մելքոնյան
բ. գ. թ., ասիստ. Լ. Սարգսյան

Խմբագիր՝ բ. գ. դ., պրոֆ. Վ. Գաբրիելյան

Մ 452 Մեթոդական ուղեցույց ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման եղանակների և ընթացակարգի վերաբերյալ (Հայ բանասիրության ֆակուլտետ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն).- Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 32 էջ:

Ուղեցույցում մանրամասն ներկայացվում է գիտելիքների ստուգման մեթոդների, հատկապես գրավոր աշխատանքների կազմակերպման, անցկացման և գնահատման ողջ ընթացակարգը՝ ԵՊՀ կանոնակարգին համապատասխան:

Ուղեցույցը նախատեսված է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դասախոսների և ուսանողների համար:

ՀՏԴ 378 (072)
ԳՄԴ 74.58

ISBN 978-5-8084-1927-8

© ԵՊՀ հրատ., 2015
© Կազմ. համար, 2015

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գիտաուսումնական գործընթացը ներառում է ուսումնական և հետազոտական կրթամասեր: Դրանցում կարևոր տեղ են գրավում աշխատանքի կազմակերպման մեթոդիկան և հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտության կազմակերպումը հիմնվում է գիտության ոլորտում նախկինում ձեռք բերված գիտելիքների, փորձի, մշակված ձևերի և մոտեցումների վրա:

Սույն ուղեցույցը նախատեսված է եղած կարգերի հիման վրա կարգավորելու, միօրինակացնելու և ճշգրտելու ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում թելադրության սկզբունքները, ռեֆերատի, կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությունը, դրանց կատարման մեթոդները, ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման կարգը:

Ուսանողների գիտելիքների ստուգումը կատարվում է հետևյալ **մեթոդներով**՝*

1. թելադրություն,
2. ընթացիկ ստուգում և քննություն**,
3. ռեֆերատ,
4. կուրսային աշխատանք,
5. ավարտական աշխատանք,
6. ամփոփիչ ատեստավորման քննություն,
7. մագիստրոսական թեզ:

---

* Գիտելիքների ստուգման այլ մեթոդներ նույնպես կան, սակայն մենք ներկայացնում ենք ամենատարածված և հիմնականում գրավոր ձևերը:

** Ընթացիկ ստուգումների և քննությունների, ինչպես նաև եզրափակիչ քննությունների անցկացման ընդհանուր կարգը մանրամասն տե՛ս «ԵՊՀ: Հայ բանասիրության ֆակուլտետ: Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք», Երևան, 2013:

ԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Թելադրությունը ուսանողի՝ հայերենի ուղղագրության, կետադրության իմացությունը ստուգելու գրավոր ձև է: Այն՝ որպես **առաջին ընթացիկ ստուգում**, անցկացվում է 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում «Ժամանակակից հայոց լեզու» դասընթացի շրջանակներում:

Թելադրելիս դասախոսը **պարտավոր է**.

- Տեքստը կարդալ ամբողջությամբ:
- Թելադրվող նախադասությունը սկզբում կարդալ ամբողջությամբ, այնուհետև թելադրել հատված առ հատված (հնչաշարույթներով): Ավարտելուց հետո նախադասությունը մեկ անգամ ևս կարդալ ամբողջությամբ:
- Զգուշացնել նոր պարբերությունից սկսվելու մասին՝ բացի գծիկով գրվող մեջբերվող խոսքից:
- Թելադրությունը ավարտելուց հետո տեքստը կրկին կարդալ:
- Տեքստը ամբողջությամբ կարդալուց հետո գրավորները անմիջապես հավաքել:

Թելադրությունը նախատեսում է **գնահատման հետևյալ չափանիշները.**

- Ուղղագրական յուրաքանչյուր սխալի դեպքում հանվում է **1 միավոր**, կետադրական կամ տողադարձի յուրաքանչյուր սխալի դեպքում՝ **0.5 միավոր**: Միայն առաջին կուրսում տողադարձի յուրաքանչյուր 3 սխալի դեպքում հանվում է **0.5 միավոր**:
- Կետադրական և տողադարձի սխալների քանակը հաշվարկվում է միասնաբար. վեցերորդ սխալից հետո կետադրական յուրաքանչյուր սխալի դեպքում ևս հանվում է **1 միավոր**:
- Թե՛ ուղղագրական, թե՛ կետադրական սխալները չեն խմբավորվում: Խմբավորվում է միայն նույն բաղադրիչի սխալ գրությունը նույն կամ տարբեր բառերում:
- Միասին վերցրած՝ հինգից ավելի վրիպակների և ուղղագրական արժեք ունեցող ջնջումների դեպքում ընդհանուր գնահատականից հանվում է **0.5 միավոր**:
- Թելադրությունը գնահատվում է համապատասխան միավորներով (**0-ից 9-ը. դրականի շեմ չկա**): Գնահատականները կլորացվում են:

ՈՒՂՂԱԳ. / ԿԵՏԱԴՐ.	0	1	2	3	4	5	6	7	8	9
0	9	8	7	6	5	4	3	2	1	0
1	8,5	7,5	6,5	5,5	4,5	3,5	2,5	1,5	0,5	0
2	8	7	6	5	4	3	2	1	0	
3	7,5	6,5	5,5	4,5	3,5	2,5	1,5	0,5		
4	7	6	5	4	3	2	1	0		
5	6,5	5,5	4,5	3,5	2,5	1,5	0,5			
6	6	5	4	3	2	1	0			
7	5	4	3	2	1	0				
8	4	3	2	1	0					
9	3	2	1	0						
10	2	1	0							
11	1	0								
12	0									

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԱԴՐԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսանողների գիտելիքների ստուգման գրավոր ինքնուրույն աշխատանքները նպատակ ունեն ձևավորելու և զարգացնելու ուսանողի՝ գիտական աշխատանք կատարելու ունակությունը: Դրանք օգնում են ուսանողին անհրաժեշտ գրականությունից օգտվելու, առաջադրված նյութը վերլուծելու, իր մտքերը հստակ շարադրելու*:

Կան գիտական բովանդակությանը և շարադրանքի ոճին ներկայացվող որոշակի պահանջներ՝ սեղմություն, հստակություն, մատչելիություն, ոչ հակասական հիմնադրույթներ, եզրահանգումների հետևողականություն, շարադրանքի տրամաբանականություն: Հեղինակը առանձնացնում է աշխատանքի կառուցվածքային բաղադրիչները՝ վերնագիրը, ներածությունը, գլուխներն ու ենթագլուխները:

Գիտելիքների ստուգման վերը նշված ձևերում գիտական ցանկացած խնդիր քննարկելիս չի հանձնարարվում ներկայացնել վաղուց հայտնի սահմանումներ ու տեսակետներ, մանավանդ եթե թե-

* Գրավոր աշխատանքները շարադրվում են գրական արևելահայերենով: Սփյուռքահայ ուսանողը կարող է իր գրավոր աշխատանքները (բացի թելադրությունից) ներկայացնել գրական արևմտահայերենով:

ման չի վերաբերում տվյալ հարցի տեսությանը (օր.՝ «Դերբայի ըմբռնումը հայ քերականագիտության մեջ»): Այսպես՝ «Համեմատությունը Հ. Սահյանի չափածոյում» թեման քննելիս պարտադիր չէ ներկայացնել համեմատություն հասկացության բոլոր սահմանումները, տեսակետները. ուսումնասիրողի նպատակը պետք է լինի սահյանական համեմատությունների գործածության յուրահատկությունների քննությունը:

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: *Ընդունված է, որ գիտական շարադրանքում տեսակետներ հայտնելիս, երևույթներ մեկնաբանելիս հեղինակը իր անվան փոխարեն գործածում է «**մենք**» դերանունը՝ «**ես**»-ի փոխարեն, ինչպես՝ «**մեր** կարծիքով», «**մենք** համաձայն չեմ»: Սա շարադրանքի ավանդական ձև է, որի պահպանումը ցանկալի է: «**ես**» դերանվան գործածությունը նախընտրելի է բանավոր հաղորդումների և ելույթների ժամանակ:*

Գրավոր աշխատանքների ձևավորման չափանիշները: Տեքստը պետք է ներկայացվի համակարգչային շարվածքով (A4 ձևաչափ) թղթի մեկ երեսի վրա (սահմանները՝ ձախից՝ 3 սմ, աջից՝ 1 սմ, վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2.5 սմ): Տողերի միջակայքը՝ 1.5 համակարգչային քայլ, տառաչափը՝ 12, տողատակում՝ 10, տառատեսակները՝ հայերենի համար՝ Arial Armenian, լատինատառ տեքստերի համար՝ Times New Roman, ռուսերենի համար նաև՝ Arial LatRus: Էջերի համարակալումը՝ ներքևում՝ կենտրոնում:

1. ՌԵՖԵՐԱՏ

Ռեֆերատը գիտելիքների ստուգման գրավոր մեթոդ է, որի միջոցով ստուգվում են ուսանողի գիտելիքները կոնկրետ դասընթացի վերաբերյալ: «Ռեֆերատը որևէ թեմայի ավելի խոր բացատրման, տարբեր կարծիքների համադրման արդյունք է, որի մեջ արդեն նկատելի են դառնում ուսանողի՝ գիտական աշխատանք կատարելու, ինքնուրույն եզրահանգումներ անելու կարողությունների սաղմերը»[1]: Ռեֆերատի թեմա կարող է դառնալ ուսումնական ծրագրի այն մասը, որը դասախոսության համեմատությամբ ավելի հանգամանալից ներկայացման կարիք ունի:

- Ռեֆերատի թեմաները տրվում են դասընթացի **առաջին ամսում**: Դասախոսը ներկայացնում է դասընթացի խնդիրները, հիմնական դրույթները և առաջադրում է թեմաներ՝ ուսանողների թվաքանակին համապատասխան:

[1] **Գաբրիելյան Վ.**, Գրավոր խոսք, Եր., 2004, էջ 35:

- Թեմաները հանձնարարելուց հետո դասախոսը պարտավոր է պարբերաբար անդրադառնալ ռեֆերատների կատարման ընթացքին, տեղեկանալ ծագած դժվարություններին և օգնել, որ ուսանողը դրանք հաղթահարի: Սրանով պայմանավորված՝ թեմաները դասախոսի համաձայնությամբ կարող են մասնակիորեն փոխվել:
- Ռեֆերատներ հանձնարարվում են բակալավրատի մասնագիտացման և կամընտրական դասընթացների, մագիստրատուրայի բոլոր դասընթացների շրջանակներում: **Ծավալը** 8-10 մեքենագիր կամ 10-12 ձեռագիր էջ է: **Գնահատման չափանիշները** համապատասխանում են բակալավրատի ընթացիկ ստուգման և մագիստրատուրայի ընթացիկ քննության չափանիշներին (բակալավրատ՝ 0-ից 9 միավոր, մագիստրատուրա՝ 0-ից 4 միավոր):

2. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կուրսային աշխատանքը **գիտելիքների ստուգման** այն մեթոդն է, որը հանձնարարվում է միայն մասնագիտական առարկաներից: Հայ բանասիրության ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ սովորող ուսանողները կուրսային աշխատանքներ են գրում **«Հայոց լեզու»** և **«Հայ գրականություն»** առարկաներից. դրանք ներառում են թեմաներ դասընթացի բոլոր բաժիններից:

Կուրսային աշխատանքը նախատեսված է **ուսումնական պլանով**, բաշխումը՝ ըստ ԵՊՀ կանոնադրությամբ սահմանված չափանիշների:

Կուրսային աշխատանքի կատարման համար ուսանողին հատկացվում է **1 կիսամյակ**: Թեմաները տրվում են կիսամյակի **առաջին երկու շաբաթվա** ընթացքում: Կուրսային աշխատանքի **ծավալը** 9-12 մեքենագիր կամ 12-15 ձեռագիր էջ է: Այն **քննական առարկա** է, գնահատվում է ղեկավարի կողմից **0-ից 20-միավորանոց** սանդղակով: Գնահատականը պաշտպանության ժամանակ կարող է փոխվել (բարձրանալ կամ իջնել՝ պայմանավորված ուսանողի պատասխանով):

Կուրսային աշխատանքի համար առաջադրվում են այնպիսի թեմաներ, որոնք «ուսանողին կարող են տալ **ինքնուրույն** եզրահանգումներ անելու հնարավորություն: Կուրսային աշխատանքն ուսանողի գիտական բնույթի առաջին անհատական աշխատանքն է և կարող է մեծապես օգնել նրա ստեղծագործական և գիտական կա-

ողությունների հետագա զարթոնքին, մասնագիտության մեջ խորացմանը»[2]:

- Թեմաները հաստատվում են ամբիոնի նիստում, որից հետո ներկայացվում են ուսանողների ընտրությանը:
- Ցուցակում նշվում են միայն թեմաները:
- Ղեկավարի անունը հայտարարվում է թեման ընտրելուց հետո:
- Հաշվի առնելով ուսանողի մասնագիտական նախասիրությունը, հմտությունը, կարողությունը՝ կարելի է թեման մասնակիորեն փոխել:
- Կուրսային աշխատանքի թեման պետք է ընդգրկի ուսանողի անցած նյութը:
- «Հայոց լեզու» առարկայից կուրսային աշխատանք է նախատեսվում **V** կիսամյակում: Թեմաները հանձնարարվում են I-IV կիսամյակների նյութերի վերաբերյալ:
- «Հայ գրականություն» առարկայից կուրսային աշխատանք է նախատեսվում **VII** կիսամյակում: Թեմաները հանձնարարվում են I-VI կիսամյակների նյութերի վերաբերյալ:
- Թեմաների վերջնական ընտրությունից հետո ղեկավարները դրանք ներկայացնում են համապատասխան ամբիոններին՝ հաստատման:
- Կուրսային աշխատանքը պարտադիր ունենում է օգտագործած գրականության ցանկ: Թեմայով և նյութով պայմանավորված՝ կուրսային աշխատանքը կարող է ունենալ բաժիններ (ներածություն, գլուխներ և այլն): Այս դեպքում **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ** պարտադիր է (տե՛ս Հավելված 4):
- Կուրսային աշխատանքի վերնագիրը **չպետք է նույնությամբ կրկնվի** որպես գլխի կամ ենթագլխի վերնագիր:
- Գլուխների վերնագրերը **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ** մեջ պետք է նշվեն:
- Ղեկավարը պարտավոր է ուսանողին հանձնարարել թեմային վերաբերող անհրաժեշտ գրականություն, մասնակցել պլանը կազմելու աշխատանքներին, պարբերաբար հանդիպել և ուղղորդել ուսանողին աշխատանքը կատարելու ընթացքում:

[2] **Գաբրիելյան Վ.**, նշված աշխ., էջ 37:

3. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

Բակալավրի որակավորման աստիճանի համար ավարտական աշխատանքի կատարումը **պարտադիր է**: «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ սովորող յուրաքանչյուր ուսանող ավարտական աշխատանք է գրում կա՛մ հայոց լեզվից, կա՛մ հայ գրականությունից՝ պայմանավորված մասնագիտացմամբ:

Ավարտական աշխատանքը եռաստիճան կրթական համակարգի առաջին աստիճանի (բակալավրի) ավարտական փուլում ուսանողի կողմից գրվող ինքնուրույն աշխատանք է, որի միջոցով ստուգվում են շրջանավարտի՝ գիտահետազոտական աշխատանք կատարելու գիտելիքները, կարողությունները, հմտությունները:

Ավարտական աշխատանքի ղեկավարի նշանակումը և թեմայի ընտրությունը կատարվում են ուսումնական 4-րդ տարվա **առաջին երկու շաբաթների** ընթացքում: Ավարտական աշխատանքի կատարման համար ուսանողին հատկացվում է **2 կիսամյակ**: Ավարտական աշխատանքի **ծավալը** 35-45 մեքենագիր կամ 45-55 ձեռագիր էջ է (հավելվածը (եթե կա) չի ներառվում): Այն գնահատվում է **0-ից 20 միավոր**: Ավարտական աշխատանքը գրախոսվում և գնահատվում է գրախոսի կողմից: Վերջնական գնահատումը կատարվում է **հանձնաժողովի փակ քննարկմամբ** գնահատման սահմանված չափանիշներով: (Գնահատման չափանիշները տե՛ս Հավելված 1):

Մագիստրոսական թեզը եռաստիճան* կրթական համակարգի երկրորդ աստիճանը (մագիստրատուրա) ավարտելու փուլում ուսանողի կողմից գրվող ինքնուրույն աշխատանք է, որը պայմանավորված է մագիստրոսական ծրագրի ուղղվածությամբ:

Մագիստրոսական թեզի **ղեկավարի նշանակումը** և **թեմայի ընտրությունը** կատարվում են ուսումնական **առաջին** տարվա **առաջին** կիսամյակում: Թեզի կատարման համար ուսանողին հատկացվում է **3 կիսամյակ**: Մագիստրոսական թեզի **ծավալը** 55-60 մեքենագիր կամ 60-65 ձեռագիր էջ է (հավելվածը (եթե կա) չի ներառվում): Այն գնահատվում է **0-ից 20 միավոր**: Թեզը գրախոսվում և գնահատվում է գրախոսի կողմից: Վերջնական գնահատումը կատարվում է

---

* Եռաստիճան կրթակարգի երրորդ աստիճանի ավարտման փուլում ասպիրանտի կողմից կատարվող գիտահետազոտական աշխատանքի՝ ատենախոսության կառուցվածքային հատկանիշների և այլ տեղեկությունների մասին տե՛ս ՀՀ ԲՈՀ-ի պաշտոնական կայքը՝ www.boh.am:

հանձնաժողովի փակ քննարկմամբ գնահատման սահմանված չափանիշներով: (Գնահատման չափանիշները տե՛ս Հավելված 2):

3.1. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

- Թեմաները քննարկվում, ընտրվում և հաստատվում են ամբիոնի նիստում: Բոլոր թեմաների անհրաժեշտ պայմանը **արդիականությունն** է: Այն ենթադրում է մասնագիտական առկա հիմնախնդիրները լուծելու պիտանելիություն և հետազոտության համապատասխանություն գիտության այսօրվա պահանջներին:
- Ամբիոնը ուսանողի ընտրությանն է ներկայացնում թեմաների ցանկ՝ առանց ղեկավարների անունները նշելու:
- Ուսանողը ամբիոնի առաջարկած ցանկից ընտրում է ավարտական աշխատանքի թեման:
- Ղեկավարի անունը հայտարարվում է թեման ընտրելուց հետո:
- Ղեկավարի և ուսանողի համաձայնությամբ՝ թեման մասնակիորեն կարող է փոխվել: Ուսանողը իր համար կարող է առաջարկել թեմա՝ հիմնավորելով դրա ուսումնասիրության անհրաժեշտությունը: Առաջարկված թեման քննարկվում է ղեկավարի, ամբիոնի վարիչի հետ և հաստատվում ամբիոնում:

3.2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

- Ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը արդյունավետ կատարելու առաջին նախապայմանը ուսանող-ղեկավար պարբերական հանդիպումներն են: Յուրաքանչյուր ամբիոն դասախոսների հետ ճշտում և ուսանողներին է ներկայացնում իրենց գիտական ղեկավարների հետ հանդիպման օրերը:
- Ղեկավարը ուսանողին ներկայացնում է թեմայի առանցքային հարցադրումները, հանձնարարում թեմայի վերաբերյալ տեսական գրականության որոշակի ցանկ: Կատարվում է աշխատանքի կառուցվածքային և բովանդակային պլանավորում:
- Ղեկավարը պարբերաբար տեղեկանում է նյութերը հավաքելու, համակարգելու, հետազոտելու և շարադրելու ընթացքին:
- Ցանկալի է, որ աշխատանքը ղեկավարին ներկայացվի **մաս առ մաս**:

- Եթե որևէ հիմնավոր պատճառով ուսանողը որոշ ժամանակ չի կարողանում հանդիպել գիտական ղեկավարին, ապա խորհրդակցում է, կատարած աշխատանքի մասին տեղեկացնում է հեռախոսով կամ էլեկտրոնային նամակով:
- Աշխատանքի վերջնական տարբերակը ուսանողը ներկայացնում է գիտական ղեկավարին: Մանրամասն կարդալուց հետո ղեկավարն այն վերադարձնում է (անհրաժեշտության դեպքում)՝ որոշ շտկումներ, փոփոխություններ կատարելու:
- Աշխատանքը ամբիոն է ներկայացվում միայն գիտական **ղեկավարի ստորագրությամբ** (ստորագրում է տիտղոսաթերթին): Դրանով նա հավաստում է, որ աշխատանքը ամբողջությամբ պատրաստ է, համապատասխանում է պահանջվող չափանիշներին և կարող է ներկայացվել պաշտպանության:
- Ավարտական աշխատանքները հանձնելուց հետո ամբիոնը կազմակերպում է նախապաշտպանություն ոչ ուշ, քան պաշտպանությունից **2 շաբաթ առաջ**:
- Նախապաշտպանությանը ուսանողը ամփոփ ներկայացնում է իր կատարած ուսումնասիրության հիմնական դրույթները, եզրակացությունները:
- Ներկայացված աշխատանքի թերությունների՝ տառասխալների, տեխնիկական անհարթությունների, բացթողումների, ջնջումների և այլնի համար **պատասխանատու է ուսանողը**:
- Նախապաշտպանության ժամանակ ամբիոնի վարիչը նշանակում է աշխատանքի գրախոս:
- Գրախոսը պաշտպանությունից **5 օր առաջ** գրախոսած աշխատանքը իր մեքենագիր կարծիքով ներկայացնում է ամբիոն:
- Ցանկալի է, որ գրախոսի կարծիքը լինի **1.5 մեքենագիր էջից ոչ պակաս**:
- Ուսանողը ծանոթանում է գրախոսի կարծիքին և պաշտպանության ժամանակ ցանկության դեպքում պատասխանում է դրան:
- Նախապաշտպանության **չներկայացված** աշխատանքը **չի երաշխավորվում** պաշտպանության:

Մագիստրոսական թեզի կատարման ընթացքը իրականացվում է հետևյալ կարգով՝

- Նախատեսված է առկա ուսուցման համակարգում **4**, իսկ հեռակայում՝ **5** ստուգարք:*
- Ստուգարքները նշանակում է գիտական ղեկավարը՝ ըստ կատարված աշխատանքի:
- 1-ին ստուգարքը նշանակվում է աշխատանքի նախնական փուլի կատարման վերաբերյալ (փաստագրական նյութի հավաքում, տեսակավորում) ղեկավարի դրական եզրակացության դեպքում: Նյութերը ղեկավարին ներկայացվում են ստուգարքից առնվազն **7 օր առաջ**:
- 2-րդ ստուգարքը նշանակվում է աշխատանքի 2/3 մասը (հեռակայի դեպքում՝ 1/3-ը) ղեկավարին ներկայացնելու և դրա վերաբերյալ դրական կարծիքի առկայության դեպքում: Նյութերը ղեկավարին ներկայացվում են ստուգարքից առնվազն **10 օր առաջ**:
- 3-րդ ստուգարքը նշանակվում է աշխատանքը ամբողջությամբ (հեռակայի դեպքում՝ 2/3-ը) ղեկավարին ներկայացնելու և դրա վերաբերյալ դրական կարծիքի առկայության դեպքում՝ թեզի պաշտպանությունից առնվազն **մեկուկես ամիս** առաջ:
- Քանի որ հեռակայում ուսուցումը ավել է **1** կիսամյակով, վերջին՝ 5-րդ կիսամյակում ուսանողները ստանում են ևս մեկ ստուգարք՝ ներկայացնելով աշխատանքն ամբողջությամբ: Նյութերը ղեկավարին ներկայացվում են թեզի պաշտպանությունից առնվազն **մեկուկես ամիս** առաջ:

3.3. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԹԵԶԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ավարտական աշխատանքը պետք է կազմված լինի հետևյալ բաղադրիչներից՝

- տիտղոսաթերթ,
- բովանդակություն,
- ներածություն,
- աշխատանքի հիմնական մաս (գլուխներ, ենթագլուխներ),

* Առկա ուսուցման 4 և հեռակա ուսուցման 5 ստուգարքներից մեկը անցկացվում է «Գիտական սեմինար» ուսումնական ծրագրի գիտահետազոտական կրթամասի շրջանակներում և նշանակվում է համապատասխան մագիստրոսական ծրագրի ղեկավարի կողմից:

- եզրակացություններ,
- օգտագործած գրականության ցանկ,
- համառոտագրություններ, հապավումներ,
- հավելված (ըստ անհրաժեշտության):

Կառուցվածքային բոլոր միավորների վերնագրերը տեղադրվում են էջի մեջտեղում, գրվում են մեծատառերով, առանց վերջակետի, չեն տողադարձվում և գրվում են միայն **թավ** (Bold): Կառուցվածքային հիմնական բաղադրիչները՝ աշխատանքի գլուխները, սկսվում են նոր էջից:

Տիտղոսաթերթը աշխատանքի առաջին էջն է, որը չի էջադրվում (տե՛ս Հավելված 3):

Բովանդակությունը պետք է ճշգրտությամբ համապատասխանի աշխատանքում տեղ գտած բոլոր վերնագրերին, ենթավերնագրերին և դրանց էջերին: Տեքստում նշված վերնագիրը բովանդակության մեջ ենթակա չէ փոփոխության (տե՛ս Հավելված 4): **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ** բառը գրվում է որպես այս մասի վերնագիր:

Ներածությունը աշխատանքի կարևոր մաս է՝ բովանդակային հետևյալ բաժանումով՝ **1.** հստակ հիմնավորվում են ընտրված թեմայի արդիականությունը և ուսումնասիրությունը կատարելու հիմքերը, **2.** ներկայացվում է հարցի համառոտ պատմությունը (ովքե՞ր և ի՞նչ չափով են անդրադարձել խնդրին), **3.** նշվում է(են) թեմայի հետազոտության նպատակ(ներ)ը, **4.** ամփոփ տրվում է աշխատանքի կառուցվածքը: **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** բառը գրվում է որպես այս մասի վերնագիր:

Աշխատանքի հիմնական մասը բաժանվում է գլուխների, որոնց քանակը սահմանվում է ղեկավարի հետ նախապես կազմված պլանով: Ավարտական աշխատանքը պետք է կազմված լինի նվազագույնը երկու գլխից, որոնք կարող են ունենալ ենթագլուխներ. սրանք հաջորդում են իրար, նոր էջից չեն սկսվում և պետք է ընդգրկեն **երկուսից ոչ պակաս էջեր:** Աշխատանքի այս հատվածը թեմայի բուն ուսումնասիրությունն է. հիմնախնդիրները առանձին-առանձին քննվում և լուսաբանվում են այստեղ: Հիմնվելով թեմայի վերաբերյալ արդեն եղած կարծիքների և տեսակետների վրա՝ հետազոտողը շարադրում և հիմնավորում է սեփական դատողությունները, մոտեցումներն ու տեսակետները՝ հարկ եղած դեպքում հակադրվելով արդեն եղած կարծիքներին: Աշխատանքի հեղինակը կարող է

ներկայացնել նաև իր հետազոտության արդյունքների օգտագործման վերաբերյալ առաջարկներ:

Աշխատանքի վերնագիրը **չպետք է նույնությամբ կրկնվի** որպես գլխի կամ ենթագլխի վերնագիր:

Եզրակացությունները պետք է պարունակեն ավարտական աշխատանքի գլուխների և ենթագլուխների ամփոփ մեկնաբանությունները, համառոտ պետք է նշվեն հատկապես այն դրույթները, տեսակետները, որոնք եղել են գլուխներից յուրաքանչյուրի ուսումնասիրության առանցքը, հստակ պետք է առանձնացվեն և ներկայացվեն ուսումնասիրության արդյունքներն ու հետազոտողի եզրահանգումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ բառը գրվում է որպես այս բաժնի վերնագիր:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ վերնագրի տակ նշվում են այն բոլոր աղբյուրները (մենագրություն, դասագիրք, հոդված, էլեկտրոնային կայքեր և այլն), որոնցից հետազոտողը հղում(ներ) ունի տողատակում: Գրականության ցանկում կարելի է ներառել նաև այն աշխատություններից (առավելագույնը 5 գիրք), որոնցից թեև աշխատանքում մեջբերում արված չէ, սակայն ուսանողը դրանք կարդացել է:

Օգտագործած գրականությունը ներկայացվում է որոշակի բաժիններով: Հայոց լեզվից գրված աշխատանքներում գրականության ցանկի դասավորությունը հետևյալն է՝ **1.** գիտական ուսումնասիրություններ (մենագրություններ, գիտական հրատարակություններ), **2.** բառարաններ, **3.** պարբերական մամուլ և էլեկտրոնային կայքեր, **4.** գեղարվեստական գրականություն: Յուրաքանչյուր մասում այբբենական կարգով նախ ներկայացվում են հայերեն, ապա՝ օտարալեզու հրապարակումները: Գրականագիտությունից գրված աշխատանքներում գրականության ցանկի դասավորությունը հետևյալն է՝ **1.** գեղարվեստական գրականություն, **2.** գիտական ուսումնասիրություններ (մենագրություններ, գիտական հրատարակություններ), **3.** բառարաններ, **4.** պարբերական մամուլ և էլեկտրոնային կայքեր (տե՛ս Հավելված 5):

Օգտագործած գրականության ցանկը աղբյուրի վերաբերյալ պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝ հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը (միջակետով) թավ, աշխատության անվա-

նումը (եթե գրքի կազմի վրա հեղինակի անուն նշված չէ, ապա նշվում է միայն աշխատության անվանումը), հրատարակության տեղը, հրատարակչությունը, հրատարակության տարեթիվը, աշխատության էջերի քանակը: Հին և միջնադարյան հեղինակների անունները **չեն համառոտվում**: Եթե աշխատությունը կազմված է մի քանի հատորներից, ապա աշխատության վերնագրից հետո նշվում են հատորը, հրատարակության տարեթիվը, էջերի քանակը, այնուհետև՝ հաջորդ հատորը՝ նույն հերթականությամբ: Նշված տեղեկությունները առանձնացվում են ստորակետերով, վերջում դրվում է վերջակետ: Բոլոր տեղեկությունները տրվում են **բնագրի լեզվով** և **ուղղագրությամբ**:

Համահեղինակային աշխատությունները նշելիս հաշվի է առնվում համահեղինակների քանակը. եթե նրանք երկուսն են, գրվում են երկուսի անուններն էլ կազմի վրա նշված հերթականությամբ: Երեք և ավելի համահեղինակների դեպքում նախընտրելի է գրել միայն առաջինի անունը, իսկ մյուսների փոխարեն գրել՝ **և այլք** կամ **և ուրիշներ** (օր.՝ **Աբրահամյան Ս.** և այլք, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Եր., 1974, էջ 89): Կարելի է նշել նաև բոլորի անունները:

Գեղարվեստական գրականությունը ներկայացվում է նույն սկզբունքով:

Պարբերական մամուլի դեպքում նշվում են պարբերականի անվանումը (չակերտներում), տարեթիվը, համարը, եթե ամսագիր է կամ հանդես՝ նաև էջը:

Էլեկտրոնային աղբյուրները ներկայացնելիս նշվում են միայն կայքէջերը, այսինքն՝ ոչ թե գլխավոր կայքի հասցեն, այլ կոնկրետ այն էջի հասցեն, որից կատարվել է հղումը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ մասում ներկայացվում են աշխատանքում տեղ գտած բոլոր համառոտագրությունները ու հապավումները՝ ըստ այբբենական կարգի: Յուրաքանչյուրի դիմաց դրվում է գիծ, և գրվում են դրա բաղադրիչները (կամ բառը) ամբողջությամբ: Օր.՝ ՀԹ – Հովհաննես Թումանյան, հմմտ. – համեմատել:

Հավելվածում ներկայացվում են բառացանկեր, վիճակագրական տվյալներ, դիագրամներ, աղյուսակներ և այլն, որոնք բուն աշխատանքում ներառելը տարբեր պատճառներով նպատակահար-

մար չի եղել: Հավելվածը էջանշվում է, սակայն բուն աշխատության էջերի քանակի մեջ **չի ներառվում**:

ՀԱՎԵԼՎԱԾ բառը գրվում է որպես այս մասի վերնագիր: Մի քանի հավելվածների դեպքում դրանք համարակալվում են արաբական թվանշաններով՝ **«ՀԱՎԵԼՎԱԾ 1», «ՀԱՎԵԼՎԱԾ 2»** և այլն:

ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Մեջբերումները և հղումները բոլոր գիտական աշխատությունների կարևորագույն բաղադրիչներից են, քանի որ գիտական շարադրանքում կարիք է լինում ապահովելու տվյալների հավաստիությունը: «Գիտական աշխատությունները շատ են աղքատանում առանց տվյալ հիմնախնդրի նախընթաց մեկնաբանությունների թեկուզ հակիրճ ակնարկի: Հակիրճ լինի, թե ընդարձակ այդ ակնարկը՝ հեղինակը պարտավոր է վերաբերմունքը հստակեցնել. նա կա՛մ որևէ տեսակետի համերաշխություն է հայտնում (սեփական հետագա շարադրանքը համարելով դրա լրացում, ճշգրտում, խորացում), կա՛մ էլ (մասնակի կամ արմատական անհամաձայնություն հայտնելով) հիմնավորում միանգամայն նոր սահմանում տալու անհրաժեշտությունը»[3]:

Գիտական շարադրանքում մեջբերումները տրվում են 2 ձևով՝ **ուղղակի** և **անուղղակի**[4]:

Ուղղակի մեջբերումը ներկայացվում է չակերտներում, սկսվում է մեծատառով, տրվում է նույնությամբ (առանց որևէ բառ ավելացնելու կամ հանելու), պահպանվում են բնագրի ուղղագրությունը և կետադրությունը:

Չակերտներով մեջբերվող նախադասությունը սկսվում է **փոքրատառով**, երբ մեջբերումը կատարվում է նախադասության կեսից. կրճատված մասի փոխարեն դրվում է բազմակետ (….): Օր.՝ Տեղին է հիշել Մուրացանի խոսքը. «….**ե**րբ առավոտյան արևը բերե ինձ նույն խավարը, ինչ որ բերել է գիշերը….»:

Չակերտում մեջբերումը **փոքրատառով** է գրվում, երբ մեջբերված հատվածը քերականորեն դառնում է հեղինակի խոսքի շարու-

---

[3] **Միրզոյան Վ.**, Ժամանակակից տնտեսագիտական խոսույթի լեզվատրամաբանական վերլուծություն, Եր., 2014, էջ 23:

[4] Մեջբերումների և հղումների կարգը ներկայացվում է ըստ **Յու. Ավետիսյանի** «Պաշտոնական գրագրություն» (Եր., 2001) և **Վ. Գաբրիելյանի** «Գրավոր խոսք» (Եր., 2004) աշխատությունների:

նակությունը (և, իհարկե, բնագրում մեծատառով չէ): Օր.՝ Նամակում նշվում էր, որ «**հ**յուրերը ժամանելու են նախատեսվածից փոքր-ինչ շուտ»: Նույն չակերտների մեջ չի կարելի ներկայացնել տարբեր էջերից քաղված մեջբերումները (խոսքը նախադասության շարունակությանը չի վերաբերում), եթե նույնիսկ դրանք տրամաբանորեն իրար կապված են:

Եթե մեջբերումը կիսատ է արվում, ապա բաց թողած մասի փոխարեն դրվում է բազմակետ (….), իսկ չակերտից հետո՝ վերջակետ:

Յուրաքանչյուր մեջբերում տրվում է **առանձին** չակերտներում: Մեջբերումներում հեղինակը կարող է որևէ բառ կամ արտահայտություն, նույնիսկ մեջբերումն ամբողջությամբ ներկայացնել ընդգծված, եթե այդ մասը ասելիքի առանցքային հատվածն է: Նման դեպքերում անմիջապես ընդգծված բառի (արտահայտության) կողքին՝ փակագծերում, հեղինակը գրում է՝ **ընդգծումը մերն է**: Օր.՝ Համաժամանակյա հարաբերություն արտահայտող ստորադասական նախադասությունների վերաբերյալ Գ. Գարեգինյանը նշում է, որ «**լիակատար համաձայնության** (ընդգծումը մերն է) դեպքում բաղադրիչները….»:

Նույն հեղինակից շարունակաբար կատարվող մեջբերումների դեպքում կարելի է հեղինակը (նաև աղբյուրը) նշել շարադրանքում՝ մեջբերմանը կից, փակագծերում: Առաջին մեջբերման դեպքում տողատակում աղբյուրը նշվում է ամբողջությամբ, ապա գրվում է՝ «Այսուհետև այս գրքից հղումները տրվում են շարադրանքում. փակագծերում նշվում է էջը»: Բազմահատոր գրքերի դեպքում փակագծերում նշվում է նաև հատորը: Շարադրանքում հղումը դրվում է մեջբերումից հետո՝ տրոհության նշանից առաջ:

Օտար լեզվով տեքստերից մեջբերումները տրվում են թարգմանաբար՝ հայերենով, իսկ հղումը՝ բնագրի լեզվով:

Անուղղակի մեջբերումը որևէ մտքի վերաշարադրում է, որը տրվում է առանց չակերտների:

Ուղղակի և անուղղակի մեջբերումները համարակալվում են արաբական թվանշաններով. ուղղակի խոսքի ժամանակ թվահամարը դրվում է չակերտից դուրս (տրոհության նշանից առաջ), անուղղակի մեջբերման դեպքում թվահամարը դրվում է վերջին բառի վրա: Նույն ձևով տեքստում համարակալվում են նաև ծանոթագրվող բառերը, մտքերը:

Հղումը ցույց է տալիս այն աղբյուրը, որտեղից կատարվում է մեջբերումը:

Հղումները կարելի է նշել կա՛մ նույն էջի տողատակում, կա՛մ աշխատության վերջում: Հղումների թվագրումը կատարվում է՝ կա՛մ յուրաքանչյուր էջում սկսելով մեկից, կա՛մ հաջորդաբար՝ թվաբանական աճման կարգով: Իսկ եթե հղումները ընդգրկում են ամբողջ աշխատությունը, դրանց թվահամարները դասավորվում են աճման կարգով: Հղումները գրվում են շարադրանքի տառաչափից ավելի փոքր չափով (սովորաբար 2 նիշով փոքր) և խիտ տողերով: Հղման թվահամարից հետո ո՛չ շարադրանքում, ո՛չ տողատակում որևէ կետադրական նշան չի դրվում:

Հղման մեջ նշվում են հեղինակի ազգանունը և անվան սկզբնատառը (միջակետով) թավ, աշխատության վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (պարբերականի դեպքում՝ նաև համարը), մեջբերման էջ(եր)ը: Տվյալները իրարից անջատվում են ստորակետերով. վերջում դրվում է վերջակետ: Օր.՝

[1] **Աղայան Էդ.,** Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 25:

Եթե աշխատությունն ունի 2 հեղինակ, երկուսի անունները նշվում են: Օր.՝ **Աղայան Էդ., Բարսեղյան Հ.,** Հայոց լեզու, Եր., 1981, էջ 45:

Եթե աշխատության կազմի վրա հեղինակ(ներ)ի անուն(ներ) նշված չէ (չեն), ապա հղումը սկսվում է աշխատության վերնագրով, որը տրվում է չակերտներում: Օր.՝ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Բ, Եր., 1975, էջ 104:

Չի թույլատրվում հեղինակի ազգանվան, աշխատության վերնագրի համառոտագրում: Սովորաբար համառոտագրվում է միայն **Երևան** քաղաքի անունը՝ **Եր.:** Հապավումներով կարող են տրվել միայն շատ հայտնի բառարանները կամ գիտական հանդեսները (օր.՝ ԱՀԲԲ - Արդի հայերենի բացատրական բառարան, ԲԵՀ - Բանբեր Երևանի համալսարանի):

Ուղղակի մեջբերման դեպքում հղումը սկսվում է միանգամից հեղինակի անվան և մնացած տվյալների նշումով: Անուղղակի մեջբերման դեպքում հղումը սկսվում է **Տե՛ս** նշագրումով (շեշտով, առանց բութի և ստորակետի): Օր.՝ Տե՛ս **Մելքոնյան Ս.**, Ակնարկներ հայոց լեզվի ոճագիտության, Եր., 1984, էջ 20:

Եթե աշխատությունը օտար լեզվով է, ապա **Տե՛ս** նշագրումը և **էջ** բառը տրվում են հայերեն: Օր.՝ Տե՛ս **Голуб И**., Русский язык и культура речи, Москва, 2007, էջ 12:

Կրկնվող հղումները տրվում են հետևյալ կերպ.

1. Եթե ուղղակի մեջբերում է և համընկնում է նախորդին բոլոր տվյալներով, նշվում է՝ **Նույն տեղում**:

2. Եթե նախորդ հղումից տարբերվում է միայն էջով, ապա նշվում է նաև էջը՝ **Նույն տեղում, էջ 60**:

3. Եթե անուղղակի մեջբերում է, նշվում է՝ **Տե՛ս նույն տեղը:**

4. Եթե երկու մեջբերումներ կատարված են նույն հեղինակի նույն աշխատությունից, ապա աշխատության անունը, հրատ. տեղը, տարեթիվը տրվում են միայն առաջին հղման մեջ: Հաջորդ հղումներում դրանց փոխարեն կարելի է գրել՝ **նշվ. աշխ.**: Օր.՝ **Աղայան էդ.,** նշվ. աշխ., էջ 25: Հղման այս ձևը ցանկալի չէ այն դեպքում, երբ հղումները իրարից հեռանում են երկու և ավելի էջերով:

5. Եթե նույն հեղինակից հաջորդաբար տրվում են մեկից ավելի աշխատություններ, ապա երկրորդից սկսած՝ ազգանվան փոխարեն ավանդաբար գրում են **նույնի,** ինչը ցանկալի չէ: Նախընտրելի է գրել հեղինակի ազգանունը:

Տեքստում արտահայտված մտքին վերաբերող կամ դրա հետ համեմատելի աղբյուրները հղման մեջ նշվում են կա՛մ **տե՛ս նաև (այս մասին տե՛ս),** կա՛մ **հմմտ.** նշագրումներով: Աղբյուրները ներկայացվում են կա՛մ հեղինակների ազգանունների այբբենական դասավորությամբ, կա՛մ աշխատությունների հրատարակման տարեթվերի հաջորդականությամբ: Աղբյուրները իրարից անջատվում են կա՛մ ստորակետով, կա՛մ վերջակետով: Օր.՝ Այս մասին տե՛ս **Էլոյան Ռ.**, Երվանդ Օտյանի քաղաքական երգիծանքը, Եր., 1999, **Մակարյան Ա**., Երվանդ Օտյան, Եր., 1965, **Մուրադյան Ս.**, Երվանդ Օտյան: Կյանքը և գործը, Եր., 1996: // Այս մասին տե՛ս **Մակարյան Ա**., Երվանդ Օտյան, Եր., 1965: **Մուրադյան Ս.**, Երվանդ Օտյան: Կյանքը և գործը, Եր., 1996: **Էլոյան Ռ.**, Երվանդ Օտյանի քաղաքական երգիծանքը, Եր., 1999:

Բոլոր հղումները կատարվում են **մեկ միասնական սկզբունքով:** Օր.՝ եթե **Երևան** բառը մի դեպքում համառոտագրվում է, ապա մնացյալ հղումներում նույնպես պետք է տրվի համառոտագրված:

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

- Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բոլոր անդամներին բաժանվում են տեղեկություններ ավարտական աշխատանքի վերաբերյալ (աշխատանքի վերնագիրը, ղեկավարի և գրախոսի անուն-ազգանունները):
- Ղեկավարները և գրախոսները պարտադիր մասնակցում են պաշտպանությանը: Պարտադիր մասնակցությունից ազատվում են միայն այդ ժամանակ ԵՊՀ-ում պաշտոնապես դասի լինելու դեպքում:
- Աշխատանքը ներկայացնելու համար ուսանողին տրվում է **մինչև 20 րոպե,** որի ընթացքում ուսանողը ներկայացնում է աշխատանքի կառուցվածքը, նպատակն ու խնդիրները, հետազոտության նյութի ամփոփ բովանդակությունը, արդյունքը և եզրակացությունները: Նախընտրելի է, որ ուսանողը ելույթ ունենա **բանավոր**. կարող է օգտվել իր նշումներից:
- Ուսանողի ելույթից հետո հանձնաժողովի անդամները և ներկաները կարող են հարցեր տալ թեմայի վերաբերյալ: Ուսանողը պետք է պատասխանի ամփոփ և դիպուկ:
- Հետո ելույթ է ունենում գրախոսը, որը ներկայացնում է իր կարծիքը (տե՛ս Հավելված 6) աշխատանքի վերաբերյալ: Ցանկալի է, որ գրախոսը ոչ թե սոսկ ներկայացնի աշխատանքի կառուցվածքը և վերապատմի բովանդակությունը, այլ այն գնահատի ըստ էության՝ նշելով աշխատանքի նախ արժանիքները (թեմայի արդիականություն, ինքնուրույնություն, նյութի յուրացում, տեսական գրականության իմացություն, շարադրանքի գիտականության աստիճան և այլն), ապա՝ թերություններն ու բացթողումները:
- Գրախոսը պիտի առաջարկի կոնկրետ գնահատական **20-միավորանոց սանդղակով**:
- Ուսանողին տրվում է դիտողություններին պատասխանելու իրավունք:
- Ուսանողը իրավունք ունի սահմանված կարգով բողոքարկելու իր գնահատականը:
- Բողոքարկումը կատարվում է քննության ավարտից հետո՝ 1 ժամվա ընթացքում: Ուսանողը դիմում է ներկայացնում հանձնաժողովի նախագահին: Բողոքարկմանը մասնակցում են հանձնաժողո-

վի անդամները, ուսանողական խորհրդի և ուսումնական վարչության մեկական ներկայացուցիչ:

- Բողոքարկումը կատարվում է քննության տեսագրության հիման վրա:
- Նշանակված գնահատականը կարող է բարձրանալ կամ մնալ նույնը:

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

- Շրջանավարտի գիտելիքների ստուգման ամբողջական և վերջնական ձևը ամփոփիչ ատեստավորումն է, որը իրականացվում է ըստ մասնագիտության: «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ սովորող ուսանողը ամփոփիչ ատեստավորման քննություն է հանձնում կա՛մ «Հայոց լեզու», կա՛մ «Հայ գրականություն» առարկաներից: Գնահատումը կատարվում է **20-միավորանոց սանդղակով**:
- Քննությունը սովորաբար իրականացվում է բանավոր հարցման եղանակով: Հարցատոմսերը կազմվում են ուսանողներին նախապես տրված հարցաշարին համապատասխան (հարցաշարերը տրվում են ուսումնական տարվա սկզբից): Հարցի ձևակերպումը նույնը պետք է լինի և՛ հարցաշարում, և՛ քննական տոմսում:
- «Հայոց լեզու» առարկայի քննական տոմսերը ներառում են 3 հարց, որոնցից երկուսը՝ տեսական, մեկը՝ գործնական (նախադասության վերլուծություն ըստ լեզվական մակարդակների):
- «Հայ գրականություն» առարկայի քննական տոմսերը ներառում են տեսական 3 հարց, որոնք վերաբերում են հայ գրականության տարբեր շրջափուլերի:
- Տվյալ օրը քննություն հանձնող ուսանողները ներկայանում են **քննության սկզբին**:
- Քննության սկզբին հանձնաժողովի նախագահը մանրամասն բացատրում է քննական գործընթացի և բողոքարկման կարգը:
- Ըստ այբբենական կարգի՝ 4 ուսանող վերցնում է մեկական քննատոմս: Պատրաստվելու համար նրանց հատկացվում է **մինչև 20 րոպե**: Ապա հաջորդաբար, ըստ այբբենական կարգի, ուսանողները մոտենում են քննատոմս վերցնելու:
- Ուսանողը իրավունք չունի քննատոմս փոխելու:

- Նախընտրելի է, որ ուսանողը պատասխանի բանավոր. կարող է օգտվել գրավոր նշումներից:
- Հանձնաժողովի անդամները իրավունք ունեն ուսանողին հարցեր տալու քննատոմսի շրջանակից դուրս, սակայն նախապես տրված հարցաշարի շրջանակներում:
- Պատասխանելուց հետո ուսանողը կարող է մնալ քննասենյակում:
- Վերջնական գնահատումը կատարվում է **հանձնաժողովի փակ քննարկմամբ** գնահատման սահմանված չափանիշներով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

№	ՉԱՓԱՆԻՇ	ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐԸ
1	Արդիականությունը/նորույթը	2
2	Կատարման ինքնուրույնության աստիճանը	6
3	Ձևակերպման որակը	6
4	Ներկայացման որակը	6
	Ընդամենը՝	**20**

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

№	ՉԱՓԱՆԻՇ	ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐԸ
1	Արդիականությունը/նորույթը	6
2	Ինքնուրույնության աստիճանը	6
3	Ձևակերպման որակը	4
4	Ներկայացման որակը	4
	Ընդամենը՝	**20**

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
_____ ամբիոն

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ / ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

ՀԵՂԻՆԱԿ՝ _____
ԹԵՄԱ՝ _____
ՂԵԿԱՎԱՐ՝ _____
ԳՐԱԽՈՍ՝ _____

Հանձնված է՝ «___» _____ 20 թ.

Թույլատրել պաշտպանության
ամբիոնի վարիչ՝ _____

Պաշտպանված է՝ «__» _____20 թ.

Ե Ր Ե Վ Ա Ն – 2 0 1-

ՀԱՎԵԼՎԱԾ 4.* ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- համապ. էջ

ԳԼՈՒԽ 1. (ՎԵՐՆԱԳԻՐ. մեծատառերով) ---------- համապ. էջ

1.1. (ենթավերնագիր. փոքրատառերով) համապ. էջ

1.2. (ենթավերնագիր. փոքրատառերով) -------- համապ. էջ

ԳԼՈՒԽ 2. (ՎԵՐՆԱԳԻՐ. մեծատառերով) ---------- համապ. էջ

2.1. (ենթավերնագիր. փոքրատառերով) ---------- համապ. էջ

2.1. (ենթավերնագիր. փոքրատառերով) ---------- համապ. էջ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ---------- համապ. էջ

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ---------- համապ. էջ

(ՀԱՎԵԼՎԱԾ) ---------- համապ. էջ

* Հավելվածում գլուխների և ենթագլուխների քանակը պայմանական է:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. Մենագրություններ, գիտական հրապարակումներ

1. **Աղաբաբյան Ս.**, Հայ սովետական գրականության պատմություն, 2 հատորով, հ. I, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 576 էջ:
2. **Աղայան Էդ.,** Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1984, 372 էջ:
3. **Քամալյան Ա.,** Խոսուն անունների թարգմանությունը, «Բանբեր Երևանի համալսարանի. հասարակական գիտություններ», ԵՊՀ հրատ., Երևան, 2007, № 3 (123):
4. **Суперанская А.,** Общая теория имени собственного, Москва, изд. “Наука”, 1973, 366 стр.

Բ. Բառարաններ

1. **Աղայան Էդ.,** Արդի հայերենի բացատրական բառարան, 2 հատորով, Երևան, «Հայաստան» հրատ., 1976, հ. 1, 1-930 էջ, հ. 2, 931-1616 էջ:
2. **Розенталь Д., Теленкова М.,** Словарь-справочник лингвистических терминов, Москва, изд. “Просвещение”, 1985, 356 стр.

Գ. Պարբերական մամուլ, համացանցային կայքեր

1. «Անահիտ», Փարիզ, 1898, թիւ 1, 1899, թիւ 3, 1901, թիւ 2:
2. http://subscribe.ru/archive/job.lang.turkche/200510/08221045.html

Դ. Գեղարվեստական գրականություն

1. **Դեմիրճյան Դ.**, Երկերի ժողովածու, 14 հատորով, հ. X, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 456 էջ:
2. **Շիրվանզադե Ալ.**, Երկերի ժողովածու, 10 հատորով, հ. VIII, Երևան, «Հայպետհրատ», 1961, 570 էջ:

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԳՐԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ

Կ Ա Ր Ծ Ի Ք

ուսանող(ուհի) _____ -ի «_____» թեմայով ավարտական
(անուն-ազգանուն) թեմայի անվանումը)
աշխատանքի / մագիստրոսական թեզի վերաբերյալ

_____
_____
_____
_____
_____

Աշխատանքը բավարարում է ավարտական աշխատանքին / մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջները և գնահատվում է _____ միավոր:

ԳՐԱԽՈՍ՝ _____ (անուն-ազգանուն,
(ստորագր.)
գիտ. աստիճանը, կոչումը)

«_____» _____ 20 թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ընդհանուր դրույթներ 3
Թելադրություն 4
Ընդհանուր դրույթներ գիտական շարադրանքի վերաբերյալ 5
1. Ռեֆերատ 6
2. Կուրսային աշխատանք 7
3. Ավարտական աշխատանք և մագիստրոսական թեզ 9
3.1. Ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի ղեկավարների և թեմաների ընտրությունը 10
3.2. Աշխատանքի կազմակերպման ընթացքը 10
3.3. Ավարտական աշխատանքի և թեզի կառուցվածքային առանձնահատկությունները 12
Մեջբերումներ և հղումներ կատարելու կարգը 16
Ավարտական աշխատանքի և թեզի պաշտպանության կարգը ..20
Ամփոփիչ ատեստավորման քննություն 21
Հավելված 1.
Ավարտական աշխատանքի գնահատման սանդղակ 23
Հավելված 2.
Մագիստրոսական թեզի գնահատման սանդղակ.....23
Հավելված 3.
Տիտղոսաթերթ 24
Հավելված 4.
Բովանդակություն 25
Հավելված 5.
Օգտագործած գրականության ցանկ 26
Հավելված 6.
Գրախոսի կարծիքի ձևանմուշ 27

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ)

Հրատ. սրբագրիչ՝ Լ. Հովհաննիսյան
Շապիկի ձևավորող՝ Ա. Ստեփանյան
Համ. էջադրող՝ Կ. Չալաբյան

Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 2 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1